Ո՞վ է մեղավորը

Շուշիի դեմ-դիմաց, ձորի մեջ հայկական մի գյուղ կա՝ Մխիթարաշեն, որն այնքան մոտ է Շուշիին, որ երբ այնտեղից ազերիները ավտոմատի կրակահերթ են բացում, գնդակները կպչում են գրեթե բոլոր տներին: Մխիթարաշենը փոքր է՝ 52-53 տուն, որոնց մեծ մասը դատարկ են: Տերերը աշխարհն ընկած բախտ են որոնում...

Դատարկ է նաեւ դպրոցը, ավերակ են գերեզմանատունն ու եկեղեցին, այս մոռացված գյուղը քշերն են այցելում, չնայած այն գտնվում է Ստեփանակերտին բավականին մոտիկ եւ հայտնի Խաչին Տափի (թուրքերի հորջորջմամբ՝ Թոփխանայի) կողքին է: Ինձ այդ գյուղը տարավ զարմանքը. Շուշիից փախած մի հայ ընտանիք՝ Ռոբերտ Դանիելյանը եւ կինը երեք տարի է ապրում են գյուղի ծայրին՝ վրանի տակ:

Ապրիլ ամիսն է: Վրանի շուրջ ձյան աճուկի շերտից հետո մայնուշակ է ու կանաչ խոտ, իսկ ներսում ծայրահեղ թշվառություն, որը չափազանց հեռու է հուվերգական լինելուց: Խղճուկ ծածկի տակ տերերը հավաքել են այն ամենը, ինչ հասցրել են փախցնել Շուշիի բնակարանից, ինքնաեռ ու հեռուստացույց, ընտանեկան ալբոմ ու հանդերձապահարան: *«Կռվի (չնայած) հողի մեջ ենք ապրում, գոնե թուրքի ձեռ չենք լսում»*, հանակերպված խոսում է հիվանդոտ տանտիրուհին, եւ հիշում է Շուշին, ծնողների պատմածը, թե ինչպես 1919-ին հարուստ ծնողները եկել են Մխիթարաշեն՝ կնքելու երեց քրոջը եւ թե ինչպես մկրտությունից անմիջապես հետո տեսել են իրենց Շուշին՝ բոցերի մեջ: Ու ստիպված երկար տարիներ մնացել են գյուղում՝ հարազատանալով նրան, բայց երբեք չմոռանալով, որ Շուշիի հայոց եկեղեցում պահված հայուհիներին ազերիները շպրտում էին ձորը՝ Թոփխանայում գնդակահարման համար բերված հայ տղամարդկանց ի տես:

Խաչին Տափում՝ Շուշիի վտանգավոր հարեւանությամբ, անհավատալի պայմաններում տարեց մի զույգ է ապրում, որոնց վիճակը, չգիտես ավելի նախընտրելի՞ է թե վտանգավոր, քան փոքր-ինչ վերեւում ապրող ընտանիքներինը: Վեց երեխաների հայր, Սուրեն անունով մի մարդ մնքնայով բանդել է հողը, դարձրել ստորգետնյա կացարան, ուր հասուն երեխաների, փեսայի ու թոռների հետ գոյատեւում են ծանր կարիքի մեջ:

Խորհրդային մտածելակերպը այնպես է ոչնչացրել մարդասիրությունը, որ հայկական գյուղի 35 դատարկ տներից ոչ մեկը չէր տրամադրվել աշխարհից մերժված այդ ընտանիքներին:

Այդտե՞ղ էլ պրեզիդենտի հրամաններ են պետք: Չէ, ուղղակի մանրիկ իշխանավորներին շատ ձեռնտու է, որոշ ժամանակ միայն «վերեւի» ղեկավարության թիկունքում պահվելը:

Սեփ. թղթ.